# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2008 թվականի № 63Ա
քաղ.Երևան

### «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵՂԱԲԱՇԽՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ «ԳԱԶՊՐՈՄ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության ու Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության միջև 2006 թվականի մարտի 31-ին կնքված համաձայնագրի 5.3 և 5.5 կետերը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2 865 008 բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալը մինչև 182 537 307 288 դրամ նվազեցնելուց հետո, թույլտվություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետեր «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերությանը ձեռք բերելու «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը 95 503 500 000 դրամով ավելացնելու նպատակով տեղաբաշխվող լրացուցիչ 19 միլիոն սովորական անվանական բաժնետոմսերը՝ յուրաքանչյուրը 5026,5 դրամ անվանական արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք.Երևան
15 փետրվարի 2008թ.
ժամը $16^{00}$